





Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան

Հոգեւոր Հովիւ Սուրբ Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ

Rev. Archpriest Zareh Zargarian

Pastor of the Holy Trinity Armenian Church



ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ

Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա.
Չայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:
Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի:

Հովանաորութեամբ՝
Գերշ. Տէր Բագրատ Եպս. Գալստանեանի
Առաջնորդ Գանատահայոց

Under the Auspices of
His Eminence Bishop Bagrat Galstanian
Primate of the Armenian Church of Canada

Մասնակցութեամբ
Գանատայի մօտ Հ.Հ.Գեապան՝
Նորին Գերգ. Արմէն Եգանեանի
եւ

With the presence of
His Excellency Mr. Armen Yeghanyan
Ambassador of the Republic of Armenia in Canada
and

Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի Հայոց Առաջնորդ՝
Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի

His Eminence Archbishop Hovnan Derderian
Primate of the Western Diocese of the
Armenian Church of North America

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Ի պատիւ
Սուրբ Երրորդութիւն
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւ՝

Արժ. Տէր Զարեհ
Աւագ Քինյ. Զարգարեանի

Քահանայական Չեռնադրութեան եւ Օծման

20-ԱՄԵԱԿԻՆ

An evening to honor
Rev. Archpriest Zareh Zargarian
Pastor of Holy Trinity Armenian Church

On the occasion of the 20th Anniversary of his Ordination to Priesthood

Saturday, October 6, 2012

Holy Thrinity Armenian Church “Magaros Artinian” Hall





The Right Honorable Stephen Joseph Harper
Prime Minister of Canada



PRIME MINISTER · PREMIER MINISTRE

October 6, 2012

Dear Father Zargarian:

I am pleased to offer you my warmest greetings and congratulations as you celebrate your 20th anniversary of ordination to the priesthood and are bestowed with The Queen Elizabeth II Diamond Jubilee Medal.

This special honour pays tribute to your generosity and efforts on behalf of the community, as well as your active participation in organizations like the Canadian Council of Churches and the Ontario Multi-Faith Council. In twenty years of service to Holy Trinity Armenian Apostolic Church, you have worked to bring a message of love and salvation to your parishioners and promoted values and religious traditions that are fundamental to our way of life. I hope that in the coming days, you will take the time to share fond memories with the colleagues, family and friends who have supported your journey.

Please accept my best wishes for a memorable celebration.

Yours sincerely,

The Reverend Archpriest Zareh Zargarian



1812.gc.ca



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց
His Holiness Karekin II
Supreme Patriarch and Catholicos of All Armenians



Գերշ. Ս. Բագրատ Եպս. Գալստանեան
Առաջնորդ Հայոց Գանատայի
His Eminence Bishop Bagrat Galsdanian
Primate of the Diocese of the Armenian Church of Canada



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԳԱՆԱՏԱՅԻ
ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH CANADIAN DIOCESE
DIOCÈSE CANADIEN DE LA STE ÉGLISE APOST. ARMÉNIENNE

615 STUART, OUTREMONT, QUÉBEC, CANADA H2V 3H2

Tél.: (514) 276-9479 • Fax: (514) 276-9960 • E-mail: adiocese@aol.com • www.armenianchurch.ca

ԳԵՐԸ. Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊՍ. ԳԱԼՍՏՆԵԱՆ, Առաջնորդ

BISHOP BAGRAT GALSTANYAN, Primate

Թիւ 2012049

Մոնրէալ, 30 Օգոստոս 2012

Արժանապատիւ Տէր Զարեհ Աւագ Քինյ. Զարգարեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Թորոնթօ

Արժանապատիւ եւ Սիրելի Տէր Հայր,

Սրտի մեծ գոհունակութեամբ եւ ուրախութեամբ ցանկանում եմ շնորհաւորել Ձեզ՝ Ձեր քահանայական ձեռնադրութեան եւ օծման 20-րդ տարեդարձի հոգելից առիթով:

Մեր առաջնորդութեան տարիներին եւ դրանից առաջ էլ դեռեւս ուսանողական տարիներից ականապես ենք եղել Ձեր նուիրումին ու սիրոյ հանդէպ մեր ժողովուրդին եւ նրան ծառայելու աստուածային փնտրիւթեանը: Դուք բարի մշակի սիրով հակառակ զանազան դժուարութիւնների եւ մարտահրաւերների շարունակում էք Տիրոջ Այգում Ձեր մշակութիւնը՝ մխիթարութիւն եւ ուրախութիւն պարգեւելով Ձեր ծուխի անդամներին:

Ուրախ եմ նաեւ յարկապէս, որ առ ի գնահատութիւն Ձեր քահանայական ծառայութեան այսօր Ծխական Խորհուրդդ եւ այս առիթով ստեղծուած կազմակերպիչ յանձնախումբը նշում են Ձեր ծառայութեան 20-րդ տարեդարձը որպէս առհաւարչեան այն սիրոյ, որ Դուք այս տարիների ընթացքին փոխանցել էք Ձեր ժողովուրդին, որի համար յայտնում ենք իրենց մեր բարձր գնահատանքն ու օրհնութիւնը:

Մեր շնորհաւորութիւններն ու օրհնութիւններն ենք յայտնում Ձեր ընտանիքին, իմ շատ սիրելի Երեցկին Նաիրային մշտապէս Ձեր կողքին գտնուելու եւ Ձեզ հետ հաւասարապէս բաժանելու Ձեր առաքելութիւնը, ինչպէս նաեւ Ձեր զաւակներին Նարեկին, Արէնին եւ Արագին, ովքեր աճում եւ մեծանում են մեր Սուրբ Եկեղեցու շունչով եւ օրհնութեամբ:

Այսու կրկին անգամ շնորհաւորում եմ Ձեզ, Ձեր ընտանիքին եւ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցու մեծ ընտանիքին մաղթելով, որ մխիթարութեան աղբիւր մեր Տէրը միշտ զօրավիգ ու ապաւեն լինի Ձեզ, մշտապէս գտնէք այն մխիթարութիւնն ու օրհնութիւնը ուրախութեամբ միախառնուած, որ բխում է մեր քահանայական կոչումից, գիտակցութիւնից եւ կեանքից:

Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի Շնորհը, Հայր Աստուծոյ Սէրը եւ Սուրբ Հոգու Հաղորդութիւնը լինեն Ձեզ հետ: Ամէն:

Սիրով եւ Օրհնութեամբ՝

Բագրատ Եպիսկոպոս Գալստանեան
Առաջնորդ Գանատահայոց



AMBASSADOR EXTRAORDINARY AND PLENIPOTENTIARY OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԷԱԶՈՐ ԴԵՍՊՈՒ

Միտելի հայրենակիցներ,

Մեծ ուրախությամբ տեղեկացա, որ Տորոնտոյի հայկական գաղութը մտադիր է նշել համայնքի երկարամյա նվիրյալ Հոգևոր Հովիվ՝ Արժանապատիվ Տեր Զարեհ Ավագ Քահանա Զարգարեանի քահանայական ձեռնադրության 20-ամյակը:

Հիրավի, մեծ է եղել հայ հոգևորականության ներդրումը հայապահպանման գործում: Պատմության դժվարին պահերին ժողովրդի կողքին միշտ գտնվել են հոգևոր հայրեր, որոնք սատար են կանգնել իրենց հավատացյալ համայնքին՝ կոչ անելով չհուսալքվել և հուսադրվել առ Աստված և առավել պայծառ ապագա:

Հպարտությամբ պետք է նշեմ, որ Տորոնտոյի Սուրբ Երրորդություն Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու Ավագ Քահանա, Արժանապատիվ Տեր-Զարեհ Զարգարեանը մեկն է այդ հոգևոր հայրերից, որոնք ողջ հոգով և էությամբ նվիրված են իրենց ազգանվեր և հոգեպահպան գործունեությանը: Ուրախ եմ, որ Տորոնտոյի հայությունը արդեն 20 տարի շարունակ վայելում է Տեր Հոր բարեհաճ աջակցությունն ու հովանավորությունը: Կանադայում ՀՀ դեսպանությունը նույնպես բազմիցս առիթ է ունեցել զգալու ցանկացած հարցում դեսպանությանն օժանդակելու նրա պատրաստակամությունը:

Մաղթում եմ Տեր Զարեհ Ավագ Քահանա Զարգարեանին առողջություն և ուժ՝ շարունակելու իր աստվածահաճ գործունեությունը՝ ի շահ Տորոնտոյի հայության պահպանման և հոգևոր առաջընթացի:

Արմեն Եզանյան



Premier of Ontario - Premier ministre de l'Ontario

October 6, 2012

A PERSONAL MESSAGE FROM THE PREMIER

Pastor Zargarian, on behalf of the Government of Ontario, I am delighted to offer my heartfelt congratulations as you mark the 20th anniversary of your ordination to the priesthood.

Faith can be a vital force in creating a caring and compassionate society. By providing outreach services, programs and events to citizens of all walks of life and supporting local charities and organizations, you have helped to make your community, and this province, a better place to live, work and raise a family.

I would like to commend you for your hard work and dedication over the years. Today's joyous celebration reflects the high esteem in which you are held — and the positive and lasting influence you have had on all those whose lives you have touched. Take pride in knowing that, through your leadership, passion and deep devotion to your faith and community, you serve as a source of inspiration to the citizens of Scarborough — and all Ontarians.

On this special occasion, please accept my best wishes for a memorable anniversary year.

A handwritten signature in black ink, reading "Dalton McGuinty". The signature is fluid and cursive, with the first name "Dalton" written in a larger, more prominent script than the last name "McGuinty".

Dalton McGuinty
Premier



The Honourable John McKay, P.C., M.P.

Dear Friends of Rev. Archpriest Zareh Zargarian,

As Member of Parliament for Scarborough-Guildwood, it gives me great pleasure to congratulate Rev. Archpriest Zareh Zargarian on the 20th Anniversary of his ordination to the priesthood.

I have had the privilege of getting to know Pastor Zargarian over the years and have been impressed by his level of commitment to the Armenian community and the larger Scarborough community. In addition, his volunteer work and his dedication to interfaith dialogue make him an outstanding leader.

I am honoured to have the opportunity to acknowledge the good work of Pastor Zargarian.

Sincerely,

Hon. John McKay P.C., M.P.

Room 109, Justice Bldg.
House of Commons
Ottawa, Ontario
K1A 0A6
Tel: (613) 992-1447
Fax: (613) 992-8968
E-mail: john.mckay@parl.gc.ca


www.johnmckaymp.on.ca

3785 Kingston Road
Unit #10
Toronto, Ontario
M1J 3H4
Tel: (416) 283-1226
Fax: (416) 283-7935
E-mail: jmckay@johnmckaymp.on.ca



A Message from the Mayor

It gives me great pleasure to extend greetings and a warm welcome to everyone attending the 20th anniversary celebration of Reverend Archpriest Zareh Zargarian's ordination to priesthood.

Pastor Zargarian, you have been a great mentor and role model and have provided outstanding leadership and guidance to meet the spiritual and emotional needs of individuals and families. I am delighted to join your loved ones, friends and congregation in wishing you a joyous anniversary celebration.

Places of worship remain an integral part of our communities, providing solace and inspiration to many. This celebration is not only a tribute to the unwavering faith the Holy Trinity Armenian Apostolic Church congregation has in you, but also a celebration of your commitment and dedication to an enduring church family and community.

On behalf of Toronto City Council, I extend my best wishes for a memorable anniversary celebration.

Yours truly,

A handwritten signature in black ink, appearing to read "Rob Ford". The signature is stylized with a large, sweeping initial "R" and a long, thin vertical stroke at the end.

**Mayor Rob Ford
City of Toronto**

**AGBU****ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agbu.org

10 Սեպտեմբեր 2012

Արժանապատիւ
Տէր Զարեհ Ա. Քինյ. Զարգարեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն
Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ
Թորոնթօ, Գանատա

Արժանապատիւ Քահանայ Հայր,

Գոհունակութեամբ տեղեկացանք թէ Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն Հայաստանեայց
Առաքելական Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին նախաձեռնութեամբ եւ Գանատայի Թեմի
Առաջնորդութեան հովանաւորութեամբ յառաջիկայ հոկտեմբերին պիտի նշուի ձեր հոգեւոր բեղուն
ծառայութեան 20-ամեակը:

Ս.Երրորդութիւն եկեղեցին յատուկ հարգատւութիւն մը ունի Հ.Բ.Ը.Միութեան Թորոնթոյի
շրջանակին համար, որովհետեւ անոր կազմաւորումի հոլովոյթը Միութեան հողատարածքին վրայ
սերտօրէն առնչուած է մասնաճիւղի պատմութեան եւ անոր համայնքային կեանքին հետ:

Ուրախալի է որ համայնքը, գիտակից ձեր հովուութեան ընթացքին եկեղեցւոյ ծխական
կեանքի արձանագրած բարգաւաճումին եւ ընկերային թէ միութենական գործունէութիւններու
աշխուժացումին, երախտագիտական ոգիով եւ հանդիսաւորութեամբ կը տօնէ ձեր հոգեւոր
ծառայութեան 20-ամեակը:

Այս առթիւ գոհունակութեամբ կը նշենք նաեւ եկեղեցւոյ շրջանակին եւ Հ.Բ.Ը.Միութեան
մասնաճիւղին միջեւ ստեղծուած գործակցութեան վերանորոգ տրամադրութիւնը եւ Միութեան
նախկին դպրոցաշէնքը համայնքային կեդրոնի վերածելու փոխադարձ համաձայնութիւնը:

Շնորհակալութեամբ ստացած ենք ձեր հրաւերը կեդրոնի բացման պաշտօնական
արարողութեան ներկայ գտնուելու կապակցութեամբ, սակայն Միութեան Ընդհանուր Ժողովի
նախօրեակին եւ անձնական աշխատանքային պայմաններու բերումով կարելի պիտի չըլլայ մեզի
համար ընդառաջել ձեր հրաւերին:

Այս ուրախալի առիթով ձեզի կը փոխանցենք մեր շնորհաւորութիւնները եւ ձեր հովուական
շարունակուող երկար եւ արդիւնաւոր ծառայութեան համար յաջողութեան մեր լաւագոյն
մաղթանքները:

Յարգանքներով՝

Պերճ Սեդրակեան



 THE CANADIAN COUNCIL OF CHURCHES
LE CONSEIL CANADIEN DES ÉGLISES

Greetings in the Name and Peace of Our Lord and Saviour Jesus Christ!

Greetings to His Eminence Bishop Bagrat Galstanian, to The Rev. Archpriest Zareh Zargarian and to the congregation, family and friends of Holy Trinity Armenian Orthodox Apostolic Church on this occasion of the celebration of the 20th Anniversary of Father Zargarian's Ordination to Priesthood.

The biblical books of Genesis, Psalms and Hebrews witness to us of the priesthood of Melchizedek, one who offered the break and wine of hospitality, who is seen to witness to an indestructible life, who is a priest forever.

On behalf of The Canadian Council of Churches, it is my honour, my privilege and a great, great joy to congratulate The Rev. Archpriest Zarah Zargarian on this occasion of rejoicing, on this occasion of commemorating his ordination to a priesthood that resonates with the biblical reality of the priesthood of Melchizedek.

The Canadian Council of Churches gives thanks to God for the faithfulness, graciousness, true witness and hospitality in which Father Zargarian lives and moves and has his being in his priestly vocation.

We celebrate with you the past 20 years, this present day and all the future of Father Zargarian's ministry of justice and proclamation that is to come.

Yours in Christ,

The Rev. Dr. Karen Hamilton
General Secretary
The Canadian Council of Churches



DIOCESSE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA (EASTERN)
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

ԻՐ ՎԱՐՁՔԻՆ ԱՐԺԱՆԻ ՄՇԱԿԻՆ՝ ԱՐԺՇ. Տ. ԶԱՐԵՀ Ա. ԲՀՆՅ. ԶԱՐԳԱՐԵԱՆԻՆ

Հոգեկան անխառն ուրախությամբ կը տեղեկանանք որ պիտի նշուի ձեր քահանայական ձեռնադրության եւ օծման 20-ամեակը:

Ի՛նչ մեծ ուրախութիւն ձեզի համար՝ վայելել ձեր խնամքին յանձնուած հօտին արժանի յարգանքը ձեր 20-ամեայ հոգետր եւ անձնուէր ծառայութեան ի գնահատութիւն:

Երկու տասնամեակ առաջ՝ Տիրոջ խորանին վրայ ուխտեցիք քաղցրութեամբ կրել Քրիստոսի լուծը, հաւատարմութեամբ եւ հաւատքով ծառայել Հայ Եկեղեցոյ եւ Հայ ժողովուրդին. այսօր՝ առիթը կը տրուի ձեզի վերանորոգելու ձեր ուխտը եւ նոյն եռանդով, խանդավառութեամբ, աւանդապահութեամբ եւ արդիւնատրութեամբ շարունակելու ծառայել Տիրոջ այգեստանին եւ Հայ ժողովուրդի անդաստանին:

Որպէս հոգետր հովիւր Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցոյ՝ ձեր կարողութիւններն ու ձիրքերը ամբողջութեամբ ի գործ դրած էք տեղւոյն հոգետր, կրթական եւ մշակութային կեանքի պայծառութեան եւ բարգաւաճման ի նպաստ: Մեծապէս շնորհատրելի եւ գնահատելի են ձեր նուիրեալ ծառայութիւնը եւ իրագործած նախաձեռնութիւնները Թորոնթոյի հոգետր եւ ազգային կեանքի բարելաւման եւ բարեգարդման համար:

Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած որպէս զի Ս. Հոգիի շնորհները առատացնէ ձեր եւ ձեր հարազատներուն վրայ եւ ձեր ուսերուն դրուած պատասխանատրութեանց բեռը միշտ կրէք քաղցրութեամբ եւ թեթեւութեամբ:

Սիրոյ ողջունի՝

Խաժակ Արք. Պարսամեան

Խաժակ Արք. Պարսամեան
Առաջնորդ

Յուլիս 2012
Նիւ Եորք, Ն. Ե.



WESTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ

HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐԹԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴ

Պրպէք, Յունիս 7, 2012

ՏԵՐ ԶԱՐԵՅ

ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԶԱՅԱՆԱՅՈՒԹԵԱՄԲ ՕԾԵԱԼԸ

Աստուծոյ կանչին քաջ հաւատքով ու համարձակ պատասխանեց Տեր Զարեհը եւ այսօր արդար հպարտութեամբ, բայց խոնարհ հոգիով կը տօնախմբէ իր քահանայական ծեռնադրութեան եւ օծման քսաներորդ տարեդարձը, քանզի քսան տարիներ շարունակ իր կեանքը՝ հանդերձ ընտանեօք ամրագրեց որպէս վկայութիւն Զրիստոսի Անձին, իր սպասաւորեալ անձը անձնուիրաբար խոնարհեցնելով Հայց. Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ Խորանին առջեւ հաւատքով առջուն Սուրբ Պատարագներով եւ բացառիկ ծառայութեամբ:

Սիրելի Տեր Զարեհ, Դուք Ձեր կեանքը կ'ապրիք Աստուծոյ փառքին համար: Ձեր տկար ուսերուն վրայ վերցուցիք ծանր, բայց քաղցր լուծը հովուական կեանքին եւ լոյս բերիք այն ժողովուրդին, որուն ծառայութեան կանչուեցաք: Մենք Ձեզ ճանչցանք ու սիրեցինք դեռեւս Ձեր պատանեկութեան տարիներէն եւ ի տես Ձեր օրինակելի քահանայական ծառայութեան հազար փառք կու տանք Աստուծոյ, որ Հայ Եկեղեցին օրինած է Ձեր նման օրինեալ սպասաւորներով: Երանի՜ Ձեր ծնողաց, որոնց աղօթքը Դուք մշտապէս կրած էք Ձեր հոգու մէջ: Մեր սերը Երեցկնոջ եւ Ձեր սիրասուն գաւակաց, որոնք Ձեզի հետ ապրեցան քահանայութիւնը եւ իրենց հոգու մինչեւ խորքը կը զգան Ձեր կոչումը: Դուք ծաղկեցուցիք Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն Հայց. Եկեղեցին, Գանատահայոց Թեմը եւ Հայ Եկեղեցին արդար վաստակով:

Սիրելի Տեր Զարեհ, Երեցկին Նայիրա եւ գաւակունք, թող հրճուի Ձեր հոգին ու թող Աստուած Ձեր կեանքը առատօրէն օրինէ նորանոր հանգրուաններով: Դուք դեռ շատ լոյս ու օրինութիւն պիտի բերէք հաւատաւոր մեր ժողովուրդին: Սուրբ Էջմիածնի կանթեղէն ճառագայթող լոյսը Ձեր հոգու մէջ պահած էք որպէս անմար կրակը հաւատքին, որուն հաղորդակցութեան կը հրաւիրէք մեր ազգի գաւակները:

Դուք անդրանիկը մեր ձեռամբ օծեալ քահանայից՝ օրինեալ ըլլաք:

Մնամք սիրոյ ջերմ ողջունիւ,
Աղօթարար՝


Յովնան Արքեպս. Տերտերեան
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF IRAQ
BAGHDAD



مطارنية الأرمن الأرثوذكس في العراق
بغداد

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԻՐԱԿԻ ՀԱՅՈՑ - ՊԱՂՏԱՏ

Թիւ \ Ref.: 027-228

: العدد

Թուական \ Date : 6th September 2012

: التاريخ

Rev. Arch priest Fr Zareh Zargarian
Pastor, Holy Trinity Armenian Church
Toronto, Canada

Dear Father Zareh,

We have heard through a mutual friend of ours of the upcoming celebration of the 20th Anniversary of your Ordination to the Holy Orders of the Armenian Apostolic Church.

Throughout history, it is well known that Armenian priests have played a pivotal role in the life of their people – spiritually, culturally, and patriotically. Indeed, you have traversed that path capably, starting from your days in Holy Etchmiadzin until now in your service to the Holy Trinity Armenian Church.

During my visit to Toronto two years ago, I witnessed your dedication to the values of our church and your hard work to increase the Christian faith of our people. I congratulate the Toronto Parish Council and Congregation for recognizing your manifold contributions in organizing this celebration during the 1st week of October under the capable leadership of the Primate of Canada, His Eminence Bishop Bagrat Galstanian.

Sireli Der Hayr, continue to carry the Glory of the Cross of Christ during your future endeavors as a servant in the Vineyard of the Lord.

With Appreciation and Blessings,
I remain in Prayer,

Archbishop Avak Asadourian



Archbishop Avak Asadourian
Primate,
Diocese of the Armenian Church of Iraq

هاتف: +964 1 8151853 / 6 - فاكس: +964 1 8151857

ساحة الطيران، ص.ب: ٢٢٨٠ الجادرية، بغداد - العراق

Al-Tayaran sq., P.O.Box 2280 Al-Jadriyah, BAGHDAD - IRAQ Tel: +964 1 8151853/6, Fax: +964 1 8151857

e-mail: iraqitem@yahoo.com



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻ
ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ

ARMENIAN HOLY
APOSTOLIC CHURCH
DIOCESE OF KOTAYK

ՀՀ Կոտայքի մարզ, Բ. Շարխաշոր
Հեռ. (0374) (223)-6-06-29
Ֆաքս (0374) (223)-6-06-39
E-mail: kesharis@rambler.ru

R.A. Kotayk Region C. Sharxashor
Tel. (0374) (223)-6-06-29
Fax (0374) (223)-6-06-39
E-mail: kesharis@rambler.ru

թիւ 081

09.08.2012թ.

ՏԵՐ ԶԱՐԵՅ ԱՎԱԳ ՔՅՆ. ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Սիրելի Տեր Զարեհ.

Ուրախությամբ տեղեկացանք Կանադահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Բագրատ Եպիսկոպոս Գալստանեանից, որ Թորոնթոյի Սբ. Երրորդություն եկեղեցու ծխական խորհուրդը և հավատավոր ժողովուրդը պատրաստվում են նշել Ձեր քահանայական ծեռնադրության 20 ամյակը՝ որպես արժանի հատուցում երկարամյա ծառայության:

Մեծ ուրախություն և մխիթարություն է Մեզ համար Կոտայքի թեմից ողջույններ ուղղելու Ձեզ՝ սիրելի Տեր Զարեհ, որ տարիներ առաջ ծեռնադրվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, արդեն 20 տարի է Ձեր ջանադիր ծառայությունն եք բերում Սբ. Երրորդություն եկեղեցուն և Ձեր հատու խոսքով, հոգևորականին հարիր կեցվացքով Թորոնթոյում բնակվող հայորդիներին կարողանում եք մոտ պահել ազգային-եկեղեցական կյանքին:

Արդարև ակներև և արդյունավետ է Ձեր հոգեմղեր ջանքերը Թորոնթոյի համայնքի հավատացյալներին առ Աստված դարձնելու գործում:

Ձեր օրհնաբեր ծառայության հանդեպ բարձր գնահատանքով՝ Կոտայքի թեմի հոգևորականների, հավատավոր ժողովրդի և ի մասնավոր իմ անունից հղում ենք Ձեզ մեր եղբայրական սերը և օրհնությունը՝ առ Աստված Ձեզ համար աղոթքով:

Ձեր կյանքի հոբելեանական այս հանգրվանին մեր աղոթքն է, որ Ամենակարող Տերը հովանավոր Իր Աջով օրհնություն և արևշատություն բաշխի երկարամյա նվիրյալ ծառայիդ:

Թող Երկնավոր Տերը երջանկության և հոգևոր բերկրանքի նորանոր առիթներ շնորհի Ձեզ՝ ի ուրախություն Թորոնթոյի համայնքի հավատացյալների և մեր Սուրբ եկեղեցու:

Մեր աղոթքն է առ Բարձրյալն Աստված, որ Ամենակարող Տերը պարգևի Ձեզ առողջություն, նորանոր հաջողություններ՝ ի բարօրություն Թորոնթոյի հայ համայնքի:

Օրհնությամբ՝


ԱՌԱՔԵԼ ԵՊՍ. ՔԱՐԱՅՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂԱՏՓԱՌ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ
ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄ



სომეხთა სამოციქულო წმიდა
მართლმადიდებელი ეკლესიის
საქართველოს ეპარქია

DIocese of ARMENIAN APOSTOLIC HOLY ORTHODOX CHURCH IN GEORGIA

Վրաստան, Թբილისი, 0105, Սամղերթի փող. 5, «Սուրբ Գևորգ» առաքնությունից տեղեկ: Հեռ. +995 322 754111; Ֆաքս +995 322 751790
სამღებროს ქ. #5, 0105, თბილისი, საქართველო
საკათედრო ტაძარი „სურბ გევორგ“
ტელ.: +995 322 754111 ფაქსი: +995 322 751790
ელ-ფოსტა: armenian_diocese@yahoo.com

5 Samgebros Street, 0105, Tbilisi, Georgia
"Surb Gevorg" Cathedral Church;
Phone: +995 322 754111; Fax: +995 322 751790
E-mail: armenian_diocese@yahoo.com

20 օգոստոսի 2012թ.

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՏՈՐՈՆՈՅԻ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Միրելի Տեր Զարեհ,

Վիրահայոց թեմի հոգևոր դասի, պաշտոնեության և հավատացյալների անունից ջերմորեն շնորհավորում ենք Ձեր քահանայական ձեռնադրության և օծման 20-ամյակը:

Հոգևոր կոչման բարձր գիտակցությունը և պատրաստակամությունը ծառայելու մեր ազգային եկեղեցուն, զարդարել են համայնքային, եկեղեցական, ազգային և հասարակական կյանքի Ձեր հոգևոր գործունեության 20 տարիները: Նվիրյալ հոգևորականի Ձեր նկարագիրը, հայրորդու, ավանդական քահանայի, մարդասեր ու հոգատար անձի և բարի հովվի կերպարով, լրացնում է Հայ Եկեղեցու ծառայասեր քահանայից դասը:

Մեր սրտի ջերմությունն ենք հղում Ձեր շնորհընկալ ընտանիքին, որը երեցկնոջ խոնարհությամբ և զավակներիդ հնազանդությամբ, դարձել է մի փոքրիկ եկեղեցի՝ օրինակ լինելով սփյուռքահայ հազարավոր ընտանիքների համար:

Միրելի Տեր Զարեհ, աղոթում ենք, որ Ամենակարող Աստված արևշատ տարիներ պարգևի Ձեզ և անսասան պահի քահանայական կոչման մեջ, որպեսզի շարունակեք հովվել Մայր Հայրենիքից դուրս՝ հեռավոր այդ ափերին ծվարած հայորդիներին: Ողորմած Աստված մշտապես Իր հովանու ներքո թող պահի Կանադայի Հայոց թեմը և Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցին՝ իր հոգևոր դասով, աշխարհիկ կազմով և հավատացյալ համայնքով:

Օրհնությամբ և աղոթքով՝

Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՌԱՋՈՐԴ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄ



ЕПАРХИЯ ЮГА РОССИИ
АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ

350078, г. Краснодар, ул. Тургенева, 165, а/я 1171

Тел./факс 8 (8612) 60-42-00

Ք. Կրասնոդար

20 օգոստոսի 2012թ.

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՏՈՐՈՆՏՈՅԻ

ՍՈՒՐԲ ԵՐԴՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Սիրելի Տեր Զարեհ,

Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի թեմական խորհրդի և հոգևոր դասի անունից շնորհավորում ենք Ձեր քահանայական ձեռնադրության հոբելյանական 20-ամյակը:

Քահանայագործելը Մայր Հայրենիքից դուրս պատասխանատու ծառայություն է, որը Դուք կատարում եք ամենայն սիրով և հոգածությամբ:

Քաջատեղյակ ենք Ձեր հովվական, համայնքային, ազգային և հասարակական գործունեությանը և հպարտ ենք, որ Հայոց Եկեղեցու անդաստանում ծառայում է նման ջանասեր, գնահատված և անկեղծորեն հարգված քահանա հայր, ով պատվով է իրականացնում իր նվիրյալ առաքելությունը:

Մեծագույնս գնահատելով Ձեր արժանիքները, աղոթում ենք, որ Մարդասեր Հիսուս օրհնի՝ երկարատև քահանայական ծառայություն պարգևելով Ձեզ, անխռով պահելով Ձեր ընտանիքը, Կանադայի Հայոց թեմն ու Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցու հայ համայնքը:

Օրհնությամբ և աղոթքով՝

Տ. ՍՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՎՄԵՍՅԱՆ 
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ



MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN
CATHOLICOSATE
DEAN OF MONASTRY

Գերազնորին
Տ. Բագրատ Եպս. Գալստանեան
Առաջնորդ Գանատահայոց Թեմի
Մոնթրէալ, Քէպէք

«Տուք զպատիւս արժանաւորաց»

Գերազնորին և Սիրելի Սրբազան Հայր,

Ձերդ Սրբազնութեան Յունիս 13, 2012 թուականակիր նամակից սրտի անհուն բերկրանքով տեղեկացանք բարեխնամ Թեմիդ արժանաւոր հոգևորական, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցու բազմամեայ Հոգևոր Հովի՝ Արժ. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի քահանայական Ձեռնադրութեան և օծման 20-ամեակի նշման մասին:

Արժանապատիւ Տէր Հօրը ծանօթ ենք դեռևս իր քահանայական Ձեռնադրութեան առաջին իսկ օրից: Տէր Հայրը, իր Քահանայական Ձեռնադրութիւնը Մոնթրէալում ստանալուց անմիջապէս լետոյ, ստանձնելով Հովվութեան պաշտօն Մոնթրէալի դժուարին համայնքում, կարողացաւ շատ կարճ ժամանակում հետևել «Հովի քաջ, որ զանձն իր դնէ ի վերայ ոչխարաց» Տիրաւոր պատուիրանին:

Սակայն Տէր Հօր արժանիքներն ու հովվութեան առաւել ծառայութիւնները դրսևորուեցին Թորոնթոյում, երբ նա 1996 թուականին նշանակուեց Գանատահայոց Թեմի ամենածաւալուն ծովի՝ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցու Հոգևոր Հովուի պաշտօնին:

Անցնող աւելի քան 15 տարիների ընթացքում, բոլորս ականատես եղանք Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցու կեանքում աշխուժացման: Կրկնապատկուեցին և եռապատկուեցին յարակից մարմինները, կատարուեցին նորոգութիւններ և այսօր, հպարտութեամբ ու հոգեկան մեծ խնդութեամբ կարող ենք բարձրաձայնել ասելով, որ Սիրելի Տէր Զարեհ, այդ բոլորը արդիւնքն են քո տքնաջան, նուիրեալ ու զոհաբերումով լի ծառայութեանը:

Արդ, շնորհաւորում ենք Տէր Հօրը իր Քահանայական Ձեռնադրութեան և Օծման 20-ամեակը և մաղթում քաջառողջ և արևշատ բազում տարիների կեանք՝ առաւել արդիւնաւորութեամբ ի փառս մեր Սուրբ Եկեղեցու և ի վայելումն Ազգիս հաւատաւոր զաւակների:

Անշուշտ շնորհաւորական խօսքեր պէտք է չխնայել նաև Երեցկին Նաիրային, ում Երեցկին լինելու 20-ամեակն է նաև, ով անցնող 20 տարիներին, կանգնեց Տէր Հօր կողքին, թև և թիկունք եղաւ նրան՝ իր 20-ամեայ Հովվութեան առաքելութիւնը արդիւնաւէտ դարձնելու համար: Ձեր վարձքը կատար:

Ուրեմն, Յոբելեական Յանձնախումբ, պահն է բարձրագոյն ու անմնացորդ յարգանքն ու պատիւը առատօրէն տալու ԱՐԺԱՆԱԻՈՐԻՆ

Սիրելի Տէր Զարեհ և սիրելի Երեցկին Նայիրա

ԾՆՈՐՀԱԻՈՐ 20-ԱՄԵԱԿ

Եղբայրական Ձերմ ողջունի
Մնամք Աղօթակից՝

ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳԺԵԱՆ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՏԵՍՈՒՉ



ԱՄԷՆՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԳԱՆԱՏԱՅԻ
ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH CANADIAN DIOCESE
DIOCÈSE CANADIEN DE LA STE ÉGLISE APOST. ARMÉNIENNE

615 STUART, OUTREMONT, QUÉBEC, CANADA H2V 3H2

Tél.: (514) 276-9479 • Fax: (514) 276-9960 • E-mail: adiocese@aol.com • www.armenianchurch.ca

ԳԵՐԸ. Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊՍ. ԳԱՍՏԱՆԵԱՆ, Առաջնորդ

BISHOP BAGRAT GALSTANYAN, Primate

July 6, 2012

**Rev. Archpriest Fr. Zareh Zargarian, Pastor
Holy Trinity Armenian Church
920 Progress Ave, Toronto, ON**

Dear Der Hayr,

It is with immense pleasure that I take this opportunity to congratulate you and Yeretzgin Naira on the occasion of celebrating the 20th Anniversary of your ordination to priesthood. I also join the parishioners of your congregation in celebrating this important milestone of your calling in service of the Armenian Church and the Mother See of Holy Etchmiadzine.

As a long time parishioner of Holy Trinity Armenian Church, I have come to closely collaborate with you, and witness your dedication and vision in support of the Holy Trinity Armenian Church in Toronto. Your spiritual leadership and countless initiatives have come to address the growing needs of our community, and have served and inspired your parishioners.

On this happy occasion, and on behalf of the members of the Diocesan Council, please accept our deep gratitude and love, as well as our unwavering commitment to assist you in achieving the numerous endeavors you have undertaken as the pastor of the Holy Trinity Armenian Church.

Yours faithfully,

Ara Boyajian
Chairman, Diocesan Council
Armenian Holy Apostolic Church, Canadian Diocese



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Աթո. Տ. Զարկի Ա. Քիւյ. Զարգարեան, Տոնոնք Տոմի



HOLY TRINITY
ARMENIAN APOSTOLIC CHURCH
Rev. Archpriest Zareh Zargarian, Pastor

August 24, 2012

PARISH COUNCIL'S CONGRATULATORY MESSAGE

It is memorable milestones such as the 20th anniversary of the ordination of Rev. Archpriest Zareh Zargarian that signify the enormous contribution, sacrifice and dedication of one person towards the survival, sustenance and growth of the Armenian Church.

Year after year Father Zareh continues to lead by exemplifying the very principles on which the apostles dedicated their efforts in propagating the word of our Lord Jesus Christ. His humility and unconditional care towards all parishioners is truly inspiring and energizing.

Under the charismatic leadership of Father Zargarian, the Holy Trinity Armenian Apostolic Church in Toronto has enjoyed continued growth and prosperity with significant achievements. He has been a terrific ambassador of our community and church to the various Christian organizations in Canada. His community outreach vision has also been a thrusting force in the creation and launch of the majority of 30 auxiliary bodies working under the church umbrella.

The Parish Council of the Holy Trinity Armenian Apostolic Church congratulate Father Zareh for achieving such a major milestone and wish him continued health so that he can continue to lead our parish and community into the future. On this occasion we would also like to acknowledge the support of our beloved Yeretgin Mrs. Naira Zargarian and their three children Nareg, Aren and Araz.

God bless

Stephan Ekmekjian
Parish Council Chair
Holy Trinity Armenian Apostolic Church
Toronto



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Աթո. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Զարգարյան, Նոյնոր Նովի



HOLY TRINITY
ARMENIAN APOSTOLIC CHURCH
Rev. Archpriest Zareh Zargarian, Pastor

September 10, 2012

Rev. Archpriest Fr. Zareh Zargarian, Pastor
Holy Trinity Armenian Apostolic Church

Dear Der Hayr,

It is with great joy and honour that I take this opportunity to wish you and your family my heartfelt congratulations on the occasion of the 20th anniversary of your ordination into priesthood.

As Chair of the Parish Council during the first four years of your Pastoral service to Holy Trinity Armenian Church, I had the privilege to work with you and to witness your unconditional love and commitment in the service of our church, the Mother See of Holy Etchmiadzin, and the Motherland.

The vitality and growth of the Holy Trinity Armenian Church Parish is a testament of your leadership, vision, dedication and hard work throughout the years of your pastoral service. Our congregation is blessed to have you as our spiritual leader.

On behalf of the Organizing Committee, I extend to you our heartfelt thanks and congratulations. May God bless you with strength, wisdom and good health so you may always bring glory to His name.

Respectfully,

Apet Alpaya, Chair
20th Anniversary Organizing Committee



ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, ԹՈՐՈՆՏՈ
SAINT MARY ARMENIAN APOSTOLIC CHURCH, TOTONTO

45 HALLCROWN PLACE, TORONTO, ON M2J 4Y4

Telephone: (416) 493-8122 Fax: (416) 493-8265

armenianstmary@on.aibn.com

www.stmarytoronto.com

Արժանապատիւ Տէր Զարեհ Ա. Քինյ Զարգարեան
Երկարամեայ Նուիրեալ Հոգեւոր Հովիւ
Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Որ ի Թորոնթօ-Գանատա

Արժանապատիւ Տէր Հայր .

Սրտի անհուն ուրախութեամբ եւ հոգեկան բերկրալից ցնծութեամբ, 4 Յուլիս, 2012 թուակիր Նամակով, եւ յատուկ կերպով կազմուած Յոբելիսական Յանձնախումբի տեղեկագրութեամբ, իմացանք, որ ձեր Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի տնօրինութեամբ, պիտի Նշուի Ձերդ Արժանապատուութեան Զահանայական Օծման եւ Ձեռնադրութեան 20 ամեակը:

Մշակը արժանի է իր վարձքին եւ այս հանգրուանին, արժանի Նշում մըն է 20-ամեայ Ձեր ծառայութեան այս հանգրուանը, որովհետեւ՝ 20 տարիներ շարունակ Սաղմոսերգունքի բառերով Տէրը ձեզի հետ եղաւ, ցերեկը՝ իր ցուցաբերած հոգածութեամբ, գիշերը՝ իր երգով, որ աղօթք է՝ Աստուծոյ:

20-ամեայ ձեր ծառայութեան ընթացքին Աստուած եղաւ ձեր պաշտպան վեմը, որովհետեւ, 20 տարի ձեր ձեռքերը Աստուծոյ սրբավայրին մէջ բարձրացուցիք եւ օրհնաբանեցիք Տէրը, եւ այդ օրհնաբանութիւնը ուրիշ բան չեղաւ եթէ ոչ՝ Տիրոջ անուան յաւերժօրհնագոյնը, զորս որպէս հռչակ պատմեցիք ձեր խնամքին յանձնուած Աստուծոյ ժողովուրդին:

20 ամեայ, Աստուծոյ անդաստանին մէջ ձեր ճանապարհորդութեան ընթացքին, հերկեցիք խոպանացած հոգիները, ջրեցիք անապատացած սրտերը, սրբութեամբ պատեցիք ու պաշտպանեցիք մերկացած միտքերը եւ զարդարեցիք ամայացած դաշտերը ձեր հովուութեան յանձնուած, մեր ժողովուրդի գաւակներուն:

20-ամեայ ձեր ծառայութեան օրհնալից բոլոր օրերուն, եթէ ունեցաք մուրօ օրեր, Բեթղեմի լոյսով առաջնորդուեցաք, կեանքի յոյս Ներշնչելով խաւարի մէջ եղողներուն:

20-ամեայ ձեր ծառայութեան շնորհալից բոլոր օրերուն՝

Եթէ ցաւալից օրեր ունեցաք, ցաւը ձեր մէջ զրահի վերածուեցաւ եւ որպէս Աստուծոյ խօսքին սպասաւոր, հագուեցաք լոյսի՝ զէնքերը:

Եթէ ցաւեցաք, ճշմարտութեան գօտին ամրացո՛ւց ձեր մէջքը:

Եթէ վիրաւորուեցաք, արդարութեան զրահով պաշտպանուեցա՛ք:

Եթէ ձեր ոտքերը կթոտեցան, խաղաղութեան աւետարանին շնորհքներով զարդարուեցա՛ք:

Եթէ պաշարուեցաք, հաւատքի վահանը առիք ձեր ուսերո՛ւն:

Եթէ առանձնացաք, Աստուած ձեր գլխուն դրաւ փրկութեան սաղաւարտը:

Եթէ ձեր ձեռքերը թուլցան, Աստուած ձեր ձեռքերուն մէջ դրաւ Ս. Հոգիի՛ն սուրը:

Ի վերջոյ, 20-ամեայ ձեր ծառայութեան բոլոր օրերուն, կը հաւատանք, որ ձեր հաւատքին վրայ աւելցուցիք երկնային առաքելութիւնը, առաքելութեան վրայ գիտութիւնը, գիտութեան վրայ ժուժկալութիւնը, ժուժկալութեան վրայ համբերութիւնը, համբերութեան վրայ աստուածապաշտութիւնը, աստուածապաշտութեան վրայ եղբայրասիրութիւնը, եւ եղբայրասիրութեան վրայ աստուածային սերը:

Սիրելի Տէր հայր.

Ձեր 20-ամեայ այս գեղեցիկ Յոբելեանի առիթով, յանուն Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի ծառայող մեր բոլոր Նուիրեալներուն, յանուն մեր համայնքի գաւակներուն եւ անձնապէս, կը շնորհաւորեմ Ձեզ եւ կը մաղթեմ, որ ձեր առաքելութեան բոլոր օրերուն՝ Աբրահամեան ուխտի վառած ջահը մնայ միշտ բոլր, Տապանակացած եւ Ձեր հովուութեան յանձնուած ձեր Եկեղեցւոյ ճրագը մնայ միշտ վառ, եւ Սամուէլի կանթեղին պէս՝ երկնային իմաստութեամբ, ձեր մտքին լոյսը ըլլայ միշտ բարիք, լուսաւորելով բոլոր խաւարած եւ մուրօ անկիւնները մարդկային հոգիներուն:

